«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության գնդապետ

_____ Գ. Գրիգորյան

« »_____ թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՄԲԻՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020-2021 ուստարի, 1-ին կիսամյակ
ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության
ԱՄԲԻՈՆԻ ՊԵՏ՝ ոստիկանության փոխգնդապետ Գ. Իսրայելյան

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաստիքացուցակի՝ ամբիոնին հատկացված են հետևյալ հաստիքները.
ամբիոնի պետ՝ 1,
դոցենտ՝ 1,
ավագ դասախոս՝ 1,
դասախոս՝ 1,
ուսունական ասիստենտ՝ 1,
ընդամենը՝ 5 հաստիք:
Ներկա պահին ամբիոնում համալրված են ամբիոնի պետի, դոցենտի, ավագ դասախոսի և դասախոսի հաստիքները:
Ամբիոնում համատեղության կարգով դասավանդում են 5, պայմանագրային հիմունքներով 2 դասախոս, 1 դասախոս իրականացրել է Կրթահամալիրի ասպիրանտի ղեկավարում:

2.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԲԻՈՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն կրթահամալիրի ուսումնական պլանների ամբիոնի առարկայացանկում հաշվետու ժամանակաշրջանում ընդգրկել և դասավանդվել են հետևյալ առարկաները՝

1. ՀՀ քաղաքացիական իրավունք,
2. ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունք,
3. ՀՀ աշխատանքային իրավունք,
4. Հռոմեական մասնավոր իրավունքի հիմունքներ,
5. ՀՀ բնապահպանական և հողային իրավունք,
6. ՀՀ բնապահպանական իրավունք,
7. Հողային իրավունք,
8. Մասնավոր իրավունքի հիմունքներ:

Բոլոր առարկաներն ապահովված են եղել ամբիոնի հաստիքային, համատեղության կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդող դասախոսներով:

3.ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոսներ անհատական ծանրաբեռնվածությունը կազմել է 1465 ժամ, որից՝

1. Գ. Իսրայելյան՝ 252 ժամ,
2. Գ. Մարուքյան՝ 244 ժամ,
3. Ա. Տոնոյան՝ 20 ժամ,
4. Դ. Օհանյան՝ 237 ժամ,
5. Գ. Վարդանյան՝ 206 ժամ,
6. Լ. Թասալյան՝ 248 ժամ,
7. Գ. Խաչատրյան՝ 169 ժամ,
8. Ա. Ադամյան՝ 4 ժամ,
9. Դ. Բայրամյան՝ 8 ժամ,
10. Կ. Բատիկյան՝ 57 ժամ,
11. Գ. Բեքմեզյան՝ 20 ժամ:

4. ՀԱՇՎԵՏՈՒ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում ամբիոնի առարկաների գծով պլանավորված ծանրաբեռնվածությունից կատարվել է 1453 ժամ, քանի որ Վերապատրաստման կենտրոնում «ՀՀ քաղաքացիական իրավունք», «Իրավունքի հիմունքներ», «ՀՀ աշխատանքային իրավունք» առարկաների մասով պլանավորված 12 ժամը չի կատարվել՝ ՀՀ-ում ռազմական դրության պատճառով: Ամբիոնի դոցենտ Գ. Մարուքյանը «ՀՀ քաղաքացիական իրավունք» առարկայից չի կատարել 20 ժամ, քանի որ գործուղվել է վերապատրաստման, 8 ժամ վերաբաշխվել է Գ. Իսրայելյանին՝ անվճար ուսուցման 2-րդ կուրսում, և 12 ժամ Գ. Վարդանյանին՝ վճարովի ուսուցման 2-րդ կուրսի 1-2-րդ խմբերում:

Պարբերաբար (ամիսը մեկ անգամ) վերահսկվել է լսարանային ժամաքանակների փաստացի կատարումը և տեղեկանքի ձևով ներկայացվել Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչություն:

5. ՀԱՇՎԵՏՈՒ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են ամբիոնի և դասախոսների անհատական աշխատանքային պլանով նախատեսված ուսումնամեթոդական բոլոր աշխատանքները: Կազմակերպվել և հեռավար եղանակով իրականացվել է գիտական խմբակի 1 նիստ, որի վերաբերյալ համապատասխան տեղեկանք է ներկայացվել են Կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժին:

Կազմվել և ամբիոնի նիստում քննարկվել են 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների ստուգարքային և քննական հարցաշարերը, քննական տոմսերը:

6. ՀԱՇՎԵՏՈՒ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ամբիոնի պետ Գ. Իսրայելյանը հրատարակել է.

ա) ուսումնական ձեռնարկներ՝

- Քրեաբանություն. ընդհանուր դրույթներ: Ուսումնական ձեռնարկ /Գ. Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ, Աստղիկ Գրատուն, 2020. - 192 էջ,

- Մասնավոր իրավունքի հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ /Գ. Իսրայելյան – Երևան, հեղ. հրատ., Աստղիկ Գրատուն, 2020 – 184 էջ,

բ) գիտական հոդվածներ՝

- Քաղաքացիական և վարչական դատավարությունում պետական տուրքի վերադարձման որոշ հարցեր //Օրենքի պատվար, N 10, 2020, էջեր 60-69,

- Մեդիայի դերը Հայաստանի Հանրապետությունում բնական լատենտային հանցավորության կանխարգելման կազմակերպման գործում //Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 3 (1), 2020, էջեր 58-62 (համահեղ. Ա. Մկրտիչյան),

- Պոռնկության դեմ պայքարի իրավական հիմքերի կատարելագործման որոշ հարցեր // Պետություն և իրավունք հանդես, № 2 (87), 2020, էջեր 57-62:

2. Ամբիոնի դոցենտ Գ. Մարուքյանը հրատարակել է գիտական հոդվածներ՝

- Պարտավորությունների կատարման ապահովման միջոցների հասկացությունը և տեսակները. Իրավակարգավորման հիմնախնդիրները ՀՀ օրենսդրությամբ //Օրենքի պատվար, N 10, 2020, էջեր 123-133,

- Evolution of Entrepreneurial Contracts Development: Brief Historical Digression // International Journal For Research InBusiness, Management & Accounting. Vol. 6, 2020, էջեր 4-11:

3. Համատեղության կարգով դասախոս Լ. Թասալյանը հրատարակել է հետևյալ գիտական հոդված.

- Медиация или трудовой спор // Օրինականություն, N 119, 2020, էջեր 56-58:

4. Համատեղության կարգով դասախոս Դ. Օհանյանը հրատարակել է հետևյալ գիտական հոդվածները.

- Պայմանագրի ռեալ մեկնաբանումը //Օրենքի պատվար, N 10, 2020, էջեր 177-194,

- «Վնաս» եզրույթի հասկացությունը և սահմանները գրավառուին վնաս պատճառելը հանցակազմի համատեքստում // Օրինականություն, N 119, 2020, էջեր 16-21:

Ամբիոնի պետ Գ. Իսրայելյանի ղեկավարությամբ Ակադեմիայի վճարովի ուսուցման 4-րդ կուրսի սովորող Ք. Մանասերյանը հեղինակել է «Քաղաքացիական դատավարությունում դատական ծախսերի որոշ հարցեր» վերտառությամբ գիտական հոդվածը, որը կհրապարակվի Կրթահամալիրի կողմից:

7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամբիոնի դասախոսները ամենօրյա աշխատանքներ են կատարել սովորողների դաստիարակչական հարցերով, այդ թվում՝ հեռավար եղանակով:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՄԲԻՈՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲՈԼՈՐ ՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամբիոնում գործում են հետևյալ մատյանները.

ա) ամբիոնի նիստերի արձանագրությունների,

բ) ուսումնական պարապմունքների վերահսկողական դասալսումների,

գ) կոնսուլտացիաների:

Հաշվետու ժամանակահատվածում հեռավար եղանակով անցկացվել է ամբիոնի 2 նիստ, նիստերի ընթացքում քննարկվել են ամբիոնի իրավասությանը վերապահված հարցերը:

Ուսումնական պարապմունքների վերահսկողական դասալսումների մատյանում գրանցվել են առաջին կիսամյակում ամբիոնում դասավանդող դասախոսներ Գ. Մարուքյանի և Գ. Խաչատրյանի դասալսումների արդյունքները, կատարվել են նշումներ յուրաքանչյուր դասախոսի համար:

Կոնսուլտացիների մատյանում արձանագրվել են նախաքննական կոնսուլտացիաները:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության ամբիոնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ

Գ. Իսրայելյան